ՆԱՐԻԿ ՇԱՀԻԼՎՅԱՆ

ԺԽՏՄԱՆ ԿԱՐԳԻ ԸՄԲՌՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ

Ժխտումը կարգի գիտական և փիլիսոփայական նշանակությունը գրեթե անսահման է[1]:

Պատահական չէ, որ այն հավասարապես ուսումնասիրության առարկա է փիլիսոփայության, տրամաբանության, հոգեբանության և լեզվաբանության համար: Եվ չնայած գիտության տարբեր բնագավառների ներկայացուցիչների կողմից այս կարևորագույն երևույթի բացահայտմանն ուղղված ջանքերին շատ հարցերի վերաբերյալ գոյություն ունեն հակասական կարծիքներ, և դեռ շատ հարցեր էլ կարոտ են լուսաբանման:

Ժխտման էության բացահայտման գոյություն ունեցող հայացքների համակարգերում կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական հայեցակետերը.

ա) հայեցակետեր, որոնք հիմնված են գոյաբանական և իմացաբանական սկզբունքների վրա,

բ) հայեցակետեր, որոնք ձևավորվել են տրամաբանության ազդեցությամբ,

գ) լեզվաբանական հայեցակետեր, որոնք իրենց հերթին առանձնացվում են ըստ ձևական, իմաստաբանական–գործառական և հաղորդակցական–գործաբանական չափանիշների:

Ժխտման էության բացահայտման գոյաբանական և իմացաբանական հայեցակետը գիտական գրականության մեջ մեկնաբանվում է ժխտման օբյեկտիվ, իրական հիմքի, իրերի ժխտական վիճակի, ժխտական փաստերի, հետևաբար և ժխտական իրականության գոյության որոնմամբ, որը, սակայն, մասնագիտական գրականության մեջ վիճահարույց է:

Ժխտական իրականության կամ չգոյի առկայության հայեցակետի կողմնակիցները Ա. Մեյնոնգը, Ա. Ռայնախը, Է. Հուսերլը, Բ. Ռասելը և ուրիշներ, գտնելով, որ իրերի ժխտական վիճակ գոյություն ունի ճիշտ նույն կերպ, ինչ որ իրերի դրական վիճակն է, որ չգոյի գոյությունը անհերքելի է, օբյեկտիվ իրականությունը ընկալում են որպես գոյի և չգոյի ամբողջություն, և գտնում, որ առանց վերջինիս հավաստիությունը ընդունելու, անհնարին է հասկանալ փոփոխությունը ոչ որպես նորի առաջացում, ոչ էլ որպես հնի ոչնչացում: Բ. Ռասելը[2] հիմնավորում է ճշմարիտ ժխտական դատողությունների օբյեկտիվ հիմքը և փաստերի բացակայությունը դիտում որպես հատուկ փաստեր իրական փաստերի կողքին: Նման կարծիքի է նաև Ե. Շրյոդերը[3]: Ըստ նրա որոշակի հատկանիշների բացակայությունը նույնպես պետք է համարել հատկանիշ, քանզի այն որոշակի է դարձնում իրականության մասին ունեցած մեր անորոշ պատկերացումները:

Մինչդեռ մի շարք ուրիշ գիտնականներ մերժում են ժխտման գոյաբանական հիմքը և չեն ընկալում այն որպես օբյեկտիվ իրականության ուղղակի արտացոլում, ինչպես նշում է Ի. Ն. Բրոդսկին. «Այն դրությունը, համաձայն որի ժխտական ասույթը փաստում է ժխտական իրականության մասին և հարաբերվում է հատուկ ժխտական փաստերի աշխարհին, հակասում է փորձին և

պրակտիկային: Իրականում գոյություն ունեցող ժխտական փաստեր փորձով ապացուցված չեն»[4]: Համաձայն վերոհիշյալ տեսակետի ժխտումը իրականության ուղղակի արտացոլում չէ, այլ միջոց է օբյեկտիվ իրականության կապերի, հարաբերությունների մարդկանց կողմից կատարվող քննության: Ժխտումը, որպես այդպիսին, գոյություն ունի «մտքի մեջ, բայց ոչ իրականության»[5], այն «նախ և առաջ հարաբերվում է իմաստին, նշանակությանը (meaning) և ոչ գոյին (being)»[6]:

Դասական փիլիսոփա Հեգելի խոսքերով «Մենք մտածում ենք, պատկերացնում ենք ոչինչը, մենք այդ մասին խոսում ենք, այսինքն պետք է որ այն գոյություն ունենա. ոչինչը գոյություն ունի մտածողության, պատկերացումների, խոսքի մեջ... »[7]: Ժխտական ասույթի միջոցով արտահայտվում է որևէ վարկածային, հնարավոր, ենթադրվող իրադրություն և միաժամանակ ընդգծվում, որ իրականում այդ ասույթին ընդհանրապես կամ տվյալ կոնկրետ դեպքում չի համապատասխանում որևէ փաստ: Ժխտական ասույթի արտահայտումը հոգեբանորեն ավելի բարդ գործընթաց է և անպայման ենթադրում է կանխադրույթի (Prakonzept) առկայություն, այսինքն նախ պետք է լինի որևէ բան, որը ենթարկվի ժխտման: Ինչպես նշում է Շ. Բալլին. «Ժխտումը մերժում է հաստատումից»[8]: Ժխտման հիմքում ընկած է հաստատումը: Հաստատումը որևէ հատկանիշի հավաստումն է, այսինքն հավաստվում է որևէ բառի, ասույթի բովանդակությունը, այն ընկալվում է դրականորեն: Ժխտումը հաստատման բացառումն է: Այս դեպքում բառի, ասույթի բովանդակությունը չի հավաստվում: Ժխտումը և հաստատումը հակադրամիասնություն են, միևնույն չափման երկու բևեռներ: Սակայն այդ բևեռացումը բացարձակ չէ. դրական և բացասական բևեռները իմաստ են ձեռք բերում միայն միմյանց հետ փոխհարաբերության ժամանակ և հաճախ փոխակերպվում են մեկը մյուսի: Սա հատկապես կարևոր է ոչ բացահայտ (ներկա) ժխտման ուսումնասիրության ժամանակ:

Ժխտումը, որպես սուբյեկտիվ երևույթ, դիտվում է նաև հոգեբանական ուղղության ներկայացուցիչների կողմից: Նրանց աշխատություններում այն գնահատվում է որպես մարդու հոգեկան աշխարհի դրսևորման ձևերից մեկը: Այսպես, օրինակ Ֆ. Պաուլը ժխտումը մեկնաբանում է որպես իրականության երկու փաստերի միջև կապի վերականգնման չհաջողված փորձ, Բ. Դելբրյուկը՝ որպես հիասթափություն ակնկալված երևույթի, հատկանիշի բացակայության պատճառով: Վան Գինեկենը ժխտումը կապում է դիմադրության կամ արգելքի զգացումի հետ, Օ. Եսպերսենը՝ տհաճության, Վ. Հավերսը՝ հուզմունքի: Ֆ. Շմիդտը ժխտումը համարում է բարդ հաղորդակցական գործընթաց, որի ընթացքում խոսողը հայտնում է խոսակցին իրականության որոշակի փաստերի նկատմամբ ունեցած իր վերաբերմունքը: Ժխտման հոգեբանական հայցքների համակարգը համարվում է անընդունելի, քանի որ այս ուղղության ներկայացուցիչները ժխտումը բնութագրում են զուտ որպես մարդկային հոգեբանության արտահայտություն:

Ժխտման էության խնդրի բացահայտման գործում հատկապես մեծ է տրամաբանության դերը. Մի շարք լեզվաբանական ուղղություններ ձևավորվել են հենց տրամաբանության ազդեցությամբ: Ժխտումը համարվում է տրամաբանական կարևորագույն հաստատուններից մեկը և մեկնաբանվում

հետևյալ կերպ. ժխտման տրամաբանական գործընթացի արդյունքում տվյալ A ասույթից ստացվում է նոր B (ոչ A) ասույթ, որը համարվում է ելակետային A ասույթի ժխտականը: B ասույթը սխալ է միայն և միայն այն դեպքում, երբ A–ն ճշմարիտ է, և ճշմարիտ է միայն այն դեպքում, երբ A–ն սխալ է[9]: Քերականական ժխտման հիմքում ընկած է տրամաբանական ժխտումը, որն արտահայտում է երկու հասկացությունների անհամատեղելիությունը: Հարկ է նշել, որ մի շարք աշխատություններում ամբողջովին նույնացվում են տրամաբանական և քերականական ժխտումները: Ժխտումը սահմանվում է որպես «տրամաբանական եզակի օպերատոր»[10] և արտահայտվում մաթեմատիկական տրամաբանությունից վերցրած «es trifft nicht zu, daß...»,[11] «it is not so that...»[12] «неверно, что...»[13] (ճիշտ չէ, որ...) միավորների միջոցով, ինչը փաստում է ժխտման զուտ տրամաբանական ընկալման մասին:

Մի շարք լեզվաբաններ իրենց աշխատություններում գործածում են տրամաբանական լեզվից վերցված այնպիսի տերմիններ, ինչպիսիք են հասկացություն, հակասություն, հակադրություն և այլն: Այսպես Ե. Ի. Շենդելսը նշում է. «Ժխտումը, որպես լեզվական կարգ, որոշակի լեզվական միջոցներով արտահայտում է հասկացությունների միջև կապերի բացակայությունը»[14]: Ինչ խոսք, տրամաբանության դրական ազդեցությունը ժխտման էության բացահայտման գործում աներկբա է: Վիճահարույց են միայն այն մեկնաբանությունները, որոնցում նույնացվում են ժխտումը տրամաբանության մեջ և լեզվում: Յուրաքանչյուր ժխտական դատողություն լեզվում իրացվում է համապատասխան ժխտական նախադասության միջոցով, սակայն դա տեղի է ունենում համաձայն լեզվի օրենքների և ոչ տրամաբանության: «Հաստատման և ժխտման տրամաբանական կարգերը համապատասխան քերականական կարգերի հիմնական իմաստն են, բայց լիովին չեն լրացնում նրանց: Հաստատման և ժխտման քերականական կարգերի արտահայտման միջոցները կիրառվում են նաև այլ նպատակներով, ունեն հարաբերական ինքնուրույնություն և նշանակությունների իրենց շրջանակը»[15]: Դրանից բացի, մեկ ժխտական դատողությունը լեզվում կարող է իրացվել բազմաթիվ նախադասություններով, քանի որ յուրաքանչյուր լեզու ունի ժխտման արտահայտման բազմաթիվ միջոցներ, որոնք հաճախ կիրառվում են նաև հարցում, արգելք, բողոք, վրդովմունք և այլն արտահայտելու նպատակով:

Իսկ այն լեզվաբանները, որոնք հեռացնում են լեզվաբանությունը փիլիսոփայության և տրամաբանության ազդեցությունից (հիմնականում ավանդական քերականներն են), ժխտման էության լուսաբանման հարցում պաշտպանում են այն տեսակետը, համաձայն որի ժխտական է համարվում այն նախադասությունը, որում առկա է որևէ ժխտական բառ կամ մասնիկ: Այս մոտեցումը սահմանափակվում է ժխտման սոսկ մակերեսային (ձևային) ուսումնասիրությամբ, և միշտ չէ, որ հաճոգիչ է համարվում, քանի որ հաճախ ժխտական տարրով նախադասությունները ժխտական չեն, և ընդհակառակը ցանկացած բնական լեզվում ժխտում կարող է արտահայտվել նաև ժխտման ոչ բացահայտ միջոցներով (ներակա ժխտում): Հաշվի առնելով լեզվում առկա նման կառույցները մի շարք լեզվաբաններ ժխտումը մեկնաբանում են ոչ որպես շարահյուսական, այլ իմաստաբանական–գործառական կամ զուտ որպես իմաս-

տաբանական կարգ, որն արտահայտվում է լեզվի բոլոր մակարդակներում ձևաբանական և շարահյուսական տարբեր միջոցներով: Ինչպես գիտենք, իմաստաբանությունը ուսումնասիրում է լեզվական միավորի իմաստը համատեքստի սահմաններից դուրս: Ժխտական ասույթի նվազագույն իմաստային միավոր է համարվում ժխտական իմաստը, որն առկա է ժխտման արտահայտման թե բացահայտ և թե ոչ բացահայտ միջոցներում: Ընդ որում բացահայտ միջոցներում այն տեսանելի է, իսկ ոչ բացահայտ միջոցներում ոչ, այլ առկա է նրանց խորքային կառուցվածքում և տեսանելի է դառնում հիմնականում փոխակերպման մեթոդի շնորհիվ:

Ժխտման կարգի ուսումնասիրության վերոհիշյալ հայեցակետերի հիման վրա ձևավորվել է ժխտման հաղորդակցական–գործաբանական մոտեցումը[16]: Ինչպես հայտնի է, գործաբանությունը ուսումնասիրում է լեզվական երևույթների առանձնահատկությունները համատեքստի սահմաններում: Վելերսհոֆը գտնում է, որ «...ժխտումը հաղորդակցության շարժիչն է: Այն ծնում է տարաձայնություններ, ինֆորմացիայի պակաս, հակասություններ, մեկուսացում, պահանջում է մանրամասների պարզաբանում, և դա այն լարվածությունն է, որը կարող է թուլանալ միայն և միայն հաղորդակցության շարունակությամբ»[17]: Ժխտման կարգի ուսումնասիրության այս հայեցակետը հնարավորություն է ընձեռում ստեղծելու լեզվում առկա ժխտման կարգի արտահայտման միջոցների «հաղորդակցական գործընթացում փաստերը հերքող, գործողությունները արգելակող ազդակների»[18] ամբողջական պատկերը: Այն լուսաբանում է ժխտման կարգի արտահայտման առանձնահատկությունները լեզվի բարձրագույն խոսքի մակարդակում: Ժխտման բացառիկությունը կայանում է նրանում, որ այն, լինելով լեզվի հասկացական կարգերից մեկը, ընդգրկում է լեզվի կառուցվածքային բոլոր մակարդակները ձևաբանականից մինչև հաղորդակցական: Հարկ է նշել, որ ժխտման արտահայտման միջոցների բազմազանությունը և բազմակերպությունը որոշ դժվարություն է առաջացնում այն որպես մեկ ամբողջական համակարգ ներկայացնելու խնդրում:

Ավելացնենք միայն այն, որ ժխտումը, որպես լեզվական ընդհանրույթ, առկա է աշխարհի բոլոր լեզուներում զարգացման բոլոր ժամանակաշրջանում: Այն ներհյուսված լինելով մարդկային լեզվի հենքին իր վաղեմությամբ, տրամաբանական հիմքով, համակողմանիությամբ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում լեզվական այլ կարգերի շրջանում:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Schmidt S. J., Textitheorie: Aspekte der Negation, Zeitschrift fur germanische Linguistik, Bd I, N2, Berlin–New York, 1973, S.179

[2] Տե՛ս Russel B., Logic and knowledge, London, 1956, p.215

[3] Տե՛ս Schroder E., Vorlesungen über die Algebra der Logik, Bd.I, Leipzig, 1890, S. 226

[4] Бродский И.Н., Отрицательные высказывания, Л., 1973, с.15

[5] Аристотель, Сочинения в 4–х т., т.2, М.,1976, с.186

[6] Heinemann F. H., The meaning of negation, In: Procedings of the Aristotelian society, vol 44, L., 1944, p.147

[7] Гегель В. Ф., Сочинения, т. 5, М.,1937, с. 92.

[9] Балли Ш., Общая лингвистика и вопросы французского языка, М., 1955, с.238
[10] Տես Кондаков Н.И., Логический словарь, М.,1971, с.366
[11] Вейнрейх У., О семантической структуре языка, В кн. Новое в лингвистике, М.,1970, вып. 5, с. 163–249
[12] Stickel G., Untersuchungen zur Negation im heutigen Deutsch, In: Schriften zur Linguistik. Bd. 1, 1970, S. 35
[13] Jackendoff R. S., Semantic interpretation in generative grammar, In: Studies in linguistics series, Vol. 2, Chapter 8 (Negation), Cambridge, 1972, p.321
[14] Бондаренко В. Н., Отрицание как логико–грамматическая категория, М., 1983, с. 52
[15] Шендельс Е. И., Отрицание как лингвистическое понятие, Учен. зап. I МГПИИЯ, т. XIX, 1959, с.125
[16] Նույն տեղում:
[17] Տես Schmidt S. J., Ճշված աշխատությունը; Weinrich H., Über Negationen in der Syntax und Semantik, In: Positionen der Negativitat, München, 1975; Манукян Ж., Семантический анализ отрицательных предложении в современном армянском языке, Е.,1975
[18] Wellershof D., Negation als Kommunikationsantrieb, In: Positionen der Negativitat, Munchen, 1975
[19] Schmidt S. J., Ճշված աշխատությունը, S. 191.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Heinemann F. H., The meaning of negation, In: Procedings of the Aristotelian society, vol. 44, L., 1944.
2. Jackendoff R. S., Semantic interpretation in generative grammar, In: Studies in linguistics series, Vol. 2, Chapter 8 (Negation), Cambridge, 1972.
3. Russel B., Logic and knowledge, London, 1956.
4. Schmidt S. J., Texttheorie: Aspekte der negation, Zeitschrift fur germanische Linguistik,Bd 1, N2, Berlin–New York, 1973.
5. Schröder E., Vorlesungen uber die Algebra der Logik, Bd.1, Leipzig, 1890.
6. Stickel G., Untersuchungen zur Negation im heutigen Deutsch, In: Schriften zur Linguistik, Bd.1, 1970.
7. Weinrich H., Uber Negationen in der Syntax und Semantik, In: Positionen der Negativitat, München, 1975.
8. Wellershof D., Negation als Kommunikationsantrieb, In: Positionen der Negativitat, Munchen, 1975.
9. Аристотель, Сочинения в 4–х т., т.2, М.,1976.
10. Балли Ш., Общая лингвистика и вопросы французского языка, М., 1955.
11. Бондаренко В. Н., Отрицание как логико–грамматическая категория, М., 1983.
12. Бродский И.Н., Отрицательные высказывания, Л., 1973.
13. Вейнрейх У., О семантической структуре языка, В кн. Новое в лингвистике, вып. 5, М., 1970.
14. Гегель В. Ф., Сочинения, т. 5, М., 1937.
15. Джаукян Г.Б., Универсальная теория языка. Пролегомены к субстанциональной лингвистике, М., 1999.
16. Кондаков Н.И., Логический словарь, М., 1971.
17. Манукян Ж., Семантический анализ отрицательных предложении в современном армянском языке, Е., 1975.
18. Шендельс Е. И., Отрицание как лингвистическое понятие, Учен. зап. I МГПИИЯ, т. XIX, 1959.

Н. Шочилвян

ОСНОВНЫЕ АСПЕКТЫ ТРАКТОВАНИЯ КАТЕГОРИИ ОТРИЦАНИЯ

В данной статье рассматриваются основные аспекты трактования сущности отрицания. Категория отрицания анализируется с философской, логической, психологической и лингвистической точек зрения. Отрицание представлено как универсальный феномен, исследования которого в научном плане, можно сказать, безграничны.

N. Shatshilvyan

THE MAIN ASPECTS OF THE INTERPRETATION OF THE NEGATION CATEGORY

The following article deals with the interpretation of the essence of negation. It discusses the most significant viewpoints of the analysis of the negation category from philosophical, logical, psychological and linguistical points of view The negation is presented as a universal phenomenon, which scientific investigations are boundless.